



ՀԱՐԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱԲԱԿԱՆ
ԵՒ ՋԱՆՇՏԱԿԱՆ

Գրութիւնք եւ չեն տրուիր:

Ծանոթացնելու մասնաւոր պայմաններով.

Ը. ՏԱՐԻ

Փետրվար. 18 Հինգշաբթի 1904

Թի 294

ԱԶԳԱՅԻՆ

ՎՍԵՄԱՓԱՅԼ ՏՐԿԻՆ ԲԱՐԹՈՂ ԲԱՇԱ

Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ՛ ինչպէս անցեալ չարթու Վեհ. Շահը Առիւծի և Արեգական պատուանշանը շնորհած էր Ն. Վսեմ. Բարթող Բաշայի, այս անգամ ալ Ն. Վեհափառութիւնը բարեհաճած է Նիշանը Շէրէմի Ա. կարգի պատուանշանը շնորհել Վսեմափայլ Տիկին Բարթող Բաշայի:

Այս լուրը մեր սրտերը ուրախութեամբ կը լեցնէ, այն պատճառաւ որ, Վսեմ. Տիկինը արդէն ծանօթ է իր բարեգործական արարքներով. մասնաւորապէս 96ի դպրականութեան միջոցին իր մեծ հոգածութեան առարկայ ըրած ըլլալուն կոտորածէն մազապուր Աղէքսանդրիա փախչող դժբախտ դպրականները. բաց աստի ի Պոլիս իր վերջին այցելութեան միջոցին ալ առատ նուէրներ տուած ըլլալուն Աղգ. Հիւանդանոցի և Գալֆեան Որբանոցի:

Խմբագրութիւնս շնորհաւորելով Վսեմափայլ Տիկինը, կը մաղթէ որ իրեն նման բարեգործուհիները այսօրինակ վեհապետական պատիւներով վարձատրուին, ի գոհունակութիւն մեր համայնքին:

ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԲԱՇԱ ՆՈՒՊԱՐ

Ուրախութեամբ կը յայտարարենք թէ՛ Վսեմ. Պօղոս Բաշա Նուպար իւր որդւոյն Վսեմ. Առաքել Պէյի ընդ. Աղն. Օր. Նեվզիկ Ասլանեանի ամուսնութեան առթիւ Գահիրէի ազգային վարժարանին ի հիմանց կառուցման ծախսոց համար 1500 ոսկի նուիրած է. բաց աստի, թօշակաւոր աղքատներուն մէյմէկ ամսական և Գալստեան վարժարանի երկսեռ կարօտ աշակերտաց մէյմէկ ձեռք հազուստ շինելու համար պէտք եղած գումարը Վսեմ. Տիգրան Բաշայի տրամադրութեան տակ գրած է:

Մեծանուն նուիրատուին ամեն դասակարգի ազգայնաց առթած բերկրանքը գիւրին է երեւակայել:

— Քաղաքիս ծանօթ վաճառականներէն Վսեմ. Միհրան Խան Գալֆեան Ալեքսանդրիոյ Պարսկական հիւպատոս անուանուած է:

Մեր ջերմ շնորհաւորութիւնները առ Վսեմ. Գալֆայեան Խան:

— Ռուս կառավարութիւնը որոշեր է «աւելի հաստատուն և ամուր ձեռքի տակ տունել կովկասը»՝ այսինքն՝ ահապին չափով աւելցնել կովկասի զօրքերուն թիւը. բոլոր քաղաքներն ու գիւղերը պաշարման վիճակի մէջ պիտի գրուին. իւրաքանչիւր գաւառ զինուորական կառավարչի մը իրաւասութեան տակ պիտի գտնուի, եւ այդ կառավարիչները պիտի գտնուին ընդհանուր կառավարչապետի մը ձեռքին տակ:

—Թիֆլիզէ Վիենական թերթերուն կը հաղորդեն .

«Հայ եկեղեցիներու գրաւուած կալուածները մատակարարող յանձնախումբին նախագահը սպաննուեցաւ . Սպանիաները որ հայ յեղափոխականներ ըլլալ կը կարծուին եղբոր , դեռ ձերբակալուած չեն : Հեռագիր մ'ալ կիմացնէ թէ իշխան Կալիցինի ազդարարուած է որ իր պալատը ուժանակով օգը պիտի հանեն : Ասոր վրայ սկըսած է բողոմաթիւ ձերջակալութիւններն :

—Երեւանէն կը գրեն թէ՝ Հայոց տուները կը խուզարկուին . նկարներ , գիրքեր և հին ժամանակներէ մնացած պատմութիւններ կը դըրաւուն , մինչեւ իսկ 1903 թուի հրատարակութիւնները , որոնք ռուս գրաքննութեան բովէն անցած են արդէն , Վերջին ցոյցի պատճառով բանտարկուած անմեղները դեռ բանտերու մէջ կը աքնին :

—Պալոյ Ս. Պատրիարքին գաւառի առաջնորդաց ուղղած այն հարցումին թէ՝ «ի՞նչ կարծիք կը յայտեն ռուս կառավարութեան քմահաճ կարգադրութեանց վրայ՝ եթէ Կաթողիկոսական աթոռը ալլուր փոխադրելու հարկը զգալի ըլլայ , սկսեր են պատասխաններ հանիլ , որոնցմէ ոմանք՝ Աթոռին կամ Կաթոս և կամ Եգիպտոս փոխադրել յարմար կը դատեն եղբոր :

—Հանգուցեալ Գարեգին Զիթնեանի այրին , որ ամուսնոյն սպանման կսկծէն խենթեցած էր , մեռեր է , բոլորովին որը ձգելով իւր երեք անչափահաս զաւկները :

Մէկ երկու օրէ ի վեր քաղաքիս մէջ տարածուած այն լուրը՝ թէ Եգիպտական կառավարութիւնը գաղթականներէն ալ զօրք պիտի առնէ՝ բոլորովին անհիմն է :

—Երէկ առաւօտ՝ Ռամէլէի թրամվայը՝ գծին վրայ աշխատող գործաւոր մը ջախջախեց . խեղճ մարդուն մահը վայրկենական եղաւ :

Ա Ձ Դ

Այն ազնիւ ապագայինք որ երամեան Յոբելեանի Յանձնաժողովոյ կողմէ նամակ ստացած են , թող բարեհաճին ընդփոյթ պատասխանել ի դիւրութիւն Յանձնաժողովոյ աշխատութեանց :

Փոքր թղթաստ

Պ. Հրանտ Ալատին ի Գահիրէ . —Վեց ամիս առած թերթերնուդ փոխարժէքը՝ 25 գահեկան այլ ևս վճարեցէք :

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ռուս-ճաքոնական պատերազմը

Պատերազմի դաշտէն շաբթուս մէջ առնուած կարեւոր լուրերն են հետեւեալները .

Ռուսական չորս մարտանաւեր յարձակած են ճաքոնական երկու վաճառանաւերու վրայ , որոցմէ մին ընկղմեր եւ միւսը յաջողեր է խոյս տալ :

—19000 ճաքոնցի զօրքեր Բորէա ելած են :

—Չէմուլքոյի կռիւն մէջ (ցամաքային) ռուսերը 44 մեռեալ և 400 վիրաւորեալ ունեցած են :

—Ճաքոնցիք Գորէայի մայրաքաղաքը՝ Սէուլը գրաւեցին :

—Ամիրալ Ալէքսիէֆ և իր սպայակոյտը Բորթ—Արթիւրէն մեկնեցան Խաբպին , որ ռուսիոյ կը պատկանի :

—Զրոյց կոյ թէ ճաքոնական նաւերը ռումբակոծած են Գերմանական մարտանաւ մը , որ Բորթ—Արթիւրէն Գերման և Ռուս հպատակներ կը փոխադրէր :

—Ռուս կառավարութիւնը իր թուրքաստանի կառավարչին հրահանգ տուած է որ եթէ Մեծըն Բրիտանիա Ռուսական շահերուն դպչելիք ու եւ է քայլ մը առնէ՝ անմիջապէս թուրքաստանի Ռուս բանակը պէտք է դէպի Հնդկաստան շարժում ընէ :

—Ռուսերը կը շարունակեն բազմաթիւ զինւոր հաւաքել Եալօ գետին (սահմանագիւղիս Գորէայի) եղբրքը , Սոյն գետն է որ Զինաստանը Գորէայէն կը զատէ :

—Ճիպոնթի ջուրերը գտնուող Ռուսական երեք մարտանաւեր և թորթիւնաւեր հրաման ստացած են մինչեւ ցնոր տնօրէնութիւն ճիպոնթիէն չի մեկնիլ :

—Ճաքոնի նոր առած երկու մեծ մարտանաւերը թոքիոյ հասած են :

—Անցեալ շաբթու գրած էինք թէ Անդրիոյ Գաղթային նախկին նախարարը՝ Պ. Չէմպրէն դէպի Եգիպտոս կուգայ . երէկ իրիկուան եկած հեռագիր մը կըսէ որ նախարարը Բոր Սայիտ հասած է :

—Պերլին, Վիեննա և Պոլիս հանրային կարծիքը ձաքոնի նկատմամբ շատ նպաստաւոր է։

—Ռուսերը Բորք—Արթիւրի հեռագրական թելերը կտրեցին, բայց ձաքոնցիք սկսան անթել հեռագրով տեսնուիլ որ մեծ ապշութիւն պատճառեց Ռուսաց։

ՏԵՍՈՒՅԻՒՆ ՄԸ

Ռուսո—ձաքոնական պատերազմը

Բաւական օրեր անցան յորմէ հետէ Ռուսո—ձաքոնական պատերազմը սկսեց և մենք տակաւին օրինաւոր ճակատամարտի մը լուրը չառինք, ի բաց առեալ ձաքոնական ծովային քանի մը յաղթութիւնները զորս գրեթէ Եւրոպայի մեծամասնութիւնը ծափահարեց և իրաւունք ալ ունէր, վասնզի սա ռուսական մարտանաւերը կարծես թղթէ շինուած ըլլային տոյքան որ մէկ մէկու ետեւէ շուտով խորտակեցան ու ընկզմեցան։ Բայց միակողմանի չըլլանք և Ռուսիոյ մեղի դէմ բռնած աննկրկ ընթացքը պատճառ մը չըլլայ շտեմնելու իր իրաւունքը այս պատերազմին մէջ։ Ռուսիա պէտք ունի Մանչուրիային գոնէ այնքան որքան Անգլիա Հնդկաստանին, Սակայն ձաքոն յաղթական պիտի ելլէ՝ վերջապէս այս պատերազմին մէջ։ Յայտնի է որ ձաքոնի ծովային զօրութիւնը կը գերազանցէ Ռուսականը՝ Մայրաքոյն Արեւելքի մէջ, և սակայն ձաքոն տակաւին վճռական յարձակում մը ըրած չէ Ռուսիոյ վրայ։ Մեծ յաղթութիւն մը չէր մինչև ցարդ ձաքոնի Ռուսիոյ հասուցած փաստը ենթադրելով թէ թշնամայն փաստներ պատճառելը անոր յաղթել կը նշանակէ։ Քանի որ ձաքոն յարձակողական դիրք մը բռնելու ստիպուած է և Ռուսիա պաշտպանողական, և քանի որ Ռուսիոյ ծովային անդրութիւնը երևան եկաւ, հաւանալի է թէ ինչո՞ւ Ռուսերը անգործ կը մնան ծովու մէջ, բայց ի՞նչ կընէ ձաքոն որ թէ՛ յարձակողական դիրք առած է և թէ՛ հզօրագոյն է նաւային տեսակէտով, ի՞նչով մեկնել իր անգործութիւնը այս մասին, ինչո՞ւ համար ետ քաշուեցաւ քանի մը յարձակումներէ յետոյ Բորթ—Արթիւրի դէմ, ինչո՞ւ համար կապասէ և միջոց կուտայ որ Ռուսերը իրենց փաստները դարմանեն և պատրաստութիւնները ամբողջացունեն։ Ասիկա եթէ անկարողութեան նշան չէ ձաքոնի կողմէն՝ ուրեմն ռազմական սխալ մըն է։

Հեռագիրներուն տուած լուրերուն նայելով մինչև ցարդ ձաքոնցիները հազիւ 20.000 զօրք

հանած են ի Գորէա, մինչդեռ եթէ պատերազմական պատրաստութիւնները առաջուց տեսած ըլլային, մինչև ցարդ 200.000 հոգի հանած պիտի ըլլային հոն։ Ի՞նչ բանի կը ծառայէր ուրեմն յարաբերութիւնները խզել։ Ռուսիոյ հետ ալքան շուտ քանի որ կրկին միջոց պիտի տային Ռուսիան իր պատրաստութիւնները յառաջ աանելու ցամաքի կողմէն, սրովհետեւ, ի հարկէ ձաքոնցիք մինչև ցարդ մեծ բանակ մը կազմեն Գորէայի մէջ, բաւական ժամանակ պիտի անցնի բան մը որուն համար Ռուսերը երախտապարտ պէտք է մնան ձաքոնի։ Այս ալ ցամաքային ռազմական սխալ մը պէտք է եղած ըլլայ եթէ ցամաքային անգործութեան արգիւնք չէ։ Ուրիշ կէտ մը կայ, այն է թէ ձաքոնի կը պակսի պատերազմական փորձառութիւնը, Չինաստանէ զատ մեծ տէրութեան մը հետ գեռ ու է պատերազմի բռնուած չըլլալուն։ Բայց ուրախութիւնն իս փորեքնիս թող չը մնայ եթէ երբեք տեսնենք Ռուսական առաջին ձախողութեանէն յետոյ յաջողութեանը։ Ռուսիա ձաքոնէ մեծ թշնամի մը սննի իր իսկ սրտին մէջ և այդ թշնամին պիտի պարտաւորէ զինք սահմանադրական վարչութիւնը հաստատելու Ռուսիոյ մէջ, ձաքոն յաղթէ թէ ոչ։

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Անդգիացի մը փութք բօսքալի սիրահար՝ իր ընդունելութեան սրահին ամէն կողմերն ալքաբարտերով (4000ի չափ) շարդարեր է այնպիսի կարգաւ մը, որ սրահէն ներս մտնողը լոնտոնէ ելնելով Քանաթա, Ամերիկա, Բերու, Աւստրալիա, Չինաստան, ձաքոն, Հնդկաստան ու բոլոր Եւրոպա շրջադայած պիտի ըլլայ։

ԲԱՆԻՈՐ

Օրգան «Հայ Սօցիալ-Դեմոկրատիայի»

Միամսեայ Հանդէս

Տնտեսական, Քաղաքական, Հասարակական

Յունվարի եւ Փետրվարի միտցեալ թիւերը հրատարակուած են։

Տարեկանն է եգիպտոսի համար 10 ֆր.

Հասցէ

Է. Բալիան

19 Պոլսի սիւ Բոնի տունը. 19

(Սիւսի)

ԺԸՆԷՎ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Բժախնորոքեան հետեւանք

Պարոն Մաղիկ քսան տարեկան եղած ատենը առտու մը երբ հայելիին առջեւ մազերը կը սանտրէր, իր գեղեցկութեանը վրայ այնչափ զմայեցաւ որ սիրտը բաբախել սկսաւ, «ինձի պէս գեղեցիկ երիտասարդ մը ի՞նչ չարժէք», ըսաւ ինքն իրեն, եւ սկսաւ խնդալ, թէն գըրպանը կտու մը չկար, եւ այս բանը եւելօք իր արժէքը կը կոտրէր, բայց,

«Հիմակուան ամուսնութիւնները կրկնակի երջանկութեան աղբիւրներ են», ըսելով մօրը գիմեց.

— Մայրիկ, ես պիտի կարգուիմ:

— Ի՞նչ, պիտի կարգուիս մի՞. քեզի է մնացեր, խլրտ դուն ալ, փարա՞դ ուրկէց է:

— Փարա՞ն ինչ պիտի ընեմ. սա գեղեցկութիւնս կը տեսնես կոր. ի՞նչ ըսես նէ՛ չարժէք. հազար ոսկիով ազոտորիկ՝ կլորիկ՝ տարիքը պղտիկ աղջիկ մը կուգեմ. հէ՛մ կը հարուստնամ, հէ՛մ կարգուած կըլլամ:

— Գտնաս նէ՛ աղէկ, ո՞ր օրիդ կայներ ես:

— Ինչո՞ւ չը պիտի գտնամ. դուն փնտռե՛լդ նայէ:

— Աղջիկ մը կայ, հարուստ շատ հարուստ ամուսնաւ, քիչ մը գեղնած է. չէնէ՛ պօյը պօսը էնտոմը ֆիտանի պէս աղջիկ. սեպէ՛ քի ուղածիդ չափ ալ փարայ կուտայ:

— Է՛հ, գեղնածը ի՞նչ պիտի ընեմ, կամաց կամաց, տահա ես ալ քառսուն տարու չեմ ա՛:

— Նայիմ, անգին ասդին կէօզ խուլախ ըլլամ տէ՛ մինասիպ բան մը ըլլայ նէ. . .

— Նայէ, գէշ չըլլար. ամա մատիդ ծարովը չէ՛:

Քանի մը օր կանցնի.

— Տղաս, աղջիկ մը կըսեն կոր, հազար ոսկի թրագօմա ունի եղեր. ամա՛ էրկանը չիտար եղեր, հօրմէն կերէր է. աս աղջիկը ամէն բանը աղէկ, մէկ յանցանք մը ունի որ ճակատը քիչ մը ցած է. աչքն ալ պղտիկ է ամա՛ պէթ չէ. պօյը է՛հ քիչ մը օրթա պօյ, ինքը քիչ մը զայիֆ սէպէ քի եօսմա. հա սա ալ զրուցեմ որ կը քսուի եղեր:

— Ձէ՛, չէ, մարիկ, պարապ տեղը մի՛ յոգնիր, ան մեր գործին չիգար. յանցանք մնաց որ վրան չը գնէիր, իրաւցունէ ստակ ունի տէ՛ յի. . . ան ալ մեղի չիտար կոր, չըլլար, չըլլար.

— Է՛յ օրդտի, հէ՛մ փարա հէ՛մ աղուորու-

թիւն երկուքը մէկ տեղ կըլլա՞յ:

— Իսն փնտռէ՛, փնտռէ, ան կը գտնուի: Երկու շաբաթ կանցնի:

— Տղայ, աղջիկ մը գտայ, շատ աղուոր, 800 ոսկի ալ փարայ, բերնիդ պաաա՛ն է:

— Ինտո՞ր աղջիկ է, պատմէ նայինք:

— Ի՞նչը պիտի պատմեմ, պատմուելու ըան չէ, հէ՛մէն մի փախցուններ:

— Ձէ, չեմ փախցուններ ամա (սուտ է, կը փախցունէ) մինչեւ որ ինտոր ըլլալը չըսես նէ՛ ըլլալու բան չէ:

— Պօյը պօսը տեղը՝ սուրաթը կլօր, շիշմանութիւնը խարէր, վարք մը վարք մը որ հազարէն մէկ կը գտնուի, սե աչուի՛ սե ինքուի՛ երկան մազերով, թուշը կլօր, ամա նայէ յանցանքն ալ զրուցեմ, ետքը չը զրուցեցիր չըսես. քիթը քիչ մը մեծկակ է, բերանն ալ խնդաց նէ՛ գիտես որ փէք մեծ երեաց՝ մինչեւ ականջներուն գնաց, ակուններն ալ սե է ամա՛ հոգ մըներ փտտած չէ:

— Աս աղջկանը խօսքը մըներ. հէ՛մ տգեղ հէ՛մ ոսկին ալ 800, չըլլար չըլլար, ուրիշ մը նայէ:

Ատենէ մը ետքը.

— Տղայ, աս աղջկանը ինչ պիտի ըսես նայիմ. տէօրիւ տէօրիւ, օճախատէ՛ ստակը անչափ չէ ամա ինքը հիւրիւմէլէք է:

— Երկու չունեորները իրարու հետ չեն վայրեր. ես ստակով կուգեմ ըսի քեզի առաջուրնէ՛ դուն անկուտի կը գտնաս:

Ամիսի մը չափ կանցնի.

— Բ՛հ, Բ՛հ. . . դուն քուն բազդդ արթուն. . . եկուր նայիմ, եկուր, եկուր. քեզի մէկ հատ աղջիկ մը գտայ որ, հատա ունիս նէ՛ չէ ըսես. չէ ըսելու բան չէ:

— Է՛յ ի՞նչ է, ըսէ նայինք, կէնէ ո՞վ դիտէ ինչ ոչինչ բան է:

— Ինչո՞ւ ոչինչ ըլլայ. իշտէ սա. . . մեծ վաճառականին աղջիկը. ո՞վ գիտէ քանի հոգի ուղեր է աէ չեն սուեր, Աստուած տար որ մեզի տային:

— Է՛յ պատմէ նայինք:

— Ասօր բաշիքը տեսայ, պըլըխ պըլըխ, պօյ մը՝ պօս մը՝ մէկ հատ նաղը քալուածք մը՝ մէկ հատ վարը՝ մը քի՛ անխըտար կըլլայ:

— Հիչ պակաս մը չունի՞:

— Մեղայ, մեղայ. բիրէի չափ պակաս չունի. ատանկ վարդի պէս աղջկան յանցանք գնողը մեղքը կը մտնայ. է՛հ գուլ գուուրսուզ օլմազ. քիչ մը անուշ կը նայի. սանքի փէք սլ պէլի չէ:

— Սըւոր շտկէ չիտակ չըսես որ շաշի է. չըլլալիք բանին ինչը կը պատմես կոր:

—Մեզայ՝ վայ մեղքիս, շաշի՝ ինչու պիտի ըլլայ. է՛յ հապա անխտար օսկին ալ կուտան կոր նէ պետէհավա չեն տար ես, հէմ՝ քեզի բան մը ըսեմ. տա թրախօմագ քիչ մը ինչեցուր, 'բէք վերէն կը թռչիս կոր. իրաւցունէ երէկուան ճահիլը չես ետ, հինգ տարի տալ ինչ էիք նէ՝ ասօր ալ ան չես.

—է՛յ քիչ մը պակաս ըլլայ.

—Նայէ, 400ի մը ի՞նչաւ նէ՝ մէկ քանի հատ կայ. հէմ միտքդ ալ անանկ խուսուրտուղ աղջիկ կառնեմ տէյի դրեր ես նէ ան ալ վերցուր.

—Սա մէկ քանի հատը պատմէ, կէնէ խօսքը մերկեցունեն.

—Մէյ մըն ալ դեղին տունին աղջիկը.

—Պակասութիւնը ի՞նչ է.

—Քիչ մը տարիքը մեծ է. սեպէ քիերուունին մօտ է.

—Չեղաւ. անդիւնները նայինք.

—Խահվէճիին թուր բէք կը դովեն կոր. պակասութիւն մը ունի որ քվչ մը աչքիս մէջը պէ, ան ալ կը մտմտամ կոր.

—Խօսքը մընեն.

—Ուրիշ ի՞նչ գիտնամ. հա՛. Գիթիւրիօսենց աղջիկը. ան ալ երկու հարիւր օսկի կուտայ կոր եղեր ամա՛ սանկ մէկ ոտքը քիչ մը կարճ է.

—Սըւոր թօփալ է ըսէ լմնցուր. նէ՛ պէլայա ուղրատըգ. ասոնց մէջը հիշ սաղլամը չիկայ. ալլահալէմ կամտց կամաց վաղ պիտի անցնիմ.

—է՛յ սանքի բէք գէշ չես ըներ. աս ճիճիէ աս ճիճի չէ ըսելով՝ վախնամ բան մը ընելիք չունիս:

* * *

Բաւական ատեն անցնելէ ետքը.

—Մարիկ. տահա աղջիկ մը չե՞ս գտնար.

—Ի՞նչ գիտնամ անխտար գըտայ. նէ՛ նազ ըրիր.

Ինչ է նէ՛ աղէկ գէշ. բան մը գտիր, ես միտքս փոխեցի, թող քիչ մը աչուր չըլլայ

—Նա Մկհտիչ աղային աղջիկը, սեպէ քի երեսուն մը կայ ամամ՝ վարըշը տեղն է եղեր, սիման ալ անանկ բէք պէ՛թ չէ. հարուր օսկի ունի եղեր. բանողչէքով ժողուեր է. կուզես նէ ա՛ռ.

—Ի՞նչը ուզեմ քա՛. ուզելու տեղը մնաց. էնտիք էնտիք օրալարա՛ մը էնտիք.

—է՛յ հոգի կէնէ մի սրգողիր. մէյ մալ տա բանին աղջիկը կայ ամամ. չէհրէն երկան է.

—Հա՛. . . . տըւոր չըսես քի խալթ. ենք ըրեր տէ քսանը հինգ տարու ելած ատեննիս չենք կարգուեր.

—Ես՝ հոգի, քիչ մըն ալ քեզմէ մեծին լօսքը մտիկ կընեն, ան խըրտար զրուցեցինք,

չէ մըն է բռնեցիր կայնեցար. հազար օսկի ըլլայ հէմ աղուոր ըլլայ. օանկ ըլլայ, նանկ ըլլայ. իշթէ սօնը սօնը ասանկ կըլլայ:

—Նէ՛ հալթ էթմիշիդ տէ օ վագըթ էվէն-մէմիշիդ. Ի՞նչ է նէ դուն կէնէ կէօղ խուլախ եղիր:

Տարիքը 50ին մատ մը կը մնայ.

—Մայրիկ տահա աղջիկ մը չե՞ս գտնար. ի՞նչ անգութ մայր ես.

—է՛յ հոգի, ծերացայ. իրաւցունէ երէկուան ճահիլը չեմ ա՛. վաթսունըհինգ. եավրում, վաթսունըհինգ. նայէ. եկար հասար.

—Հասկցանք. ինչ է նէ, ապուր մըն էր կերտնք, հիմակուան ֆայտա մը ունի. ինչ է նէ՛ պիտի առնեմ. անժառանգ կը մնանք կոր:

—Տա՛ չըխմազին մէջի աղջիկը կայ. գէշ չէ. կուզես նէ ան առ.

—Ո՞րն է ագ.

—Փրափը. քառսունը չիկայ տահա, տուն մը կը կառավարէ. քեզի ալ ասկէ անդին ի՞նչ պէտք է.

—Փրափ ըսածդ տա երեսները խաշած՝ քէօստէպէկ աղջիկ մը կայ նէ՛ ա՛ն է.

—Կէնէ մահանա դնելու կելլաս կոր. ա՛ն է. ի՞նչ պիտի ընես. եկեր ես. կերթաս կոր ասկէ ետքը աղուուրութիւն կը փնտռես. առնես պիտի նէ՛ ա՛ռ, կէնէ նազի մեկար, գիտցիր որ մէյ մալ բերանս չեմ քանար տէ աղջկան մը խօսք ըներ:

—է՛յ ինչ է նէ, խօսէ տէ լմնցուր. հետը ի՞նչ ունի եղեր:

—Ի՞նչ պիտի ունենայ. կէնէ բարակը մի մաղեր. ճէհէզ պիլէ չունի, իշթէ մէկ ֆիստանով մը պիտի գայ:

—Օ՛ֆ, գնա՛ տէ լմնցուր:

Մէկ քանի օրէն ետքը բժախնդիր պարոնը իմացաւ որ՝ անոր ալ արժանի չէ եղեր, վասնզի չեն տուեր. Ա՛լ այնուհետեւ ինքը թէեւ աղջիկներուն հաւնիլ սկսաւ, բայց աղջիկներն իրեն չի հաւնեցան. որովհետեւ ծաղիկ հասակն արդէն իրմէ հեռացած էր:



ՎԱՀՍՆ ՄՈՄՃԵՆ

Գահիրէ Ապտինի գարագօլին դէմը, Սփինքս գեղարանին կից, և Շարա Մուհամէտ ալի թը-ֆէթ—էլ—էնէպա, թիւ 1

Կը պատրաստէ ոսկիէ եւ արծաթէ զարդանկար (միւնէշի) եւ դրուագեալ զարդանկար:

Ծ Ի Ծ Ա Ղ

Սրիկային մէկը բանթալօն մը գողցած ըլլալուն համար ձերբակալուեցաւ, բայց փաստաբան մը այնչափ լաւ պաշտպանեց անոր դատը որ անպարտ արձակուեցաւ:

Վճռին կարգացուելէն ետքը ամբաստանեալը չէր ուզեր մեկնիլ, և կեցած տեղը կարծես թէ գամուած կը մնար:

— Դուրս չելլա՞ս, ըսաւ փաստաբանը:

— Չեմ համարձակիր, պատասխանեց ամբաստանեալը:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ... գողցած բանթալօնս հագեր եմ:

Նպարավաճառ մը սնանկացեր էր. առնելիքներէն իր իր կողմէ կարգաւած սենտիքը որ սընկին գոյքերը կ'արձանագրէր, ըսաւ իւր քարտուղարին:

— Շիշ մը Մալտիայի գինի արձանագրէ:

Քարտուղարը շիշը կը բանալ և քիթին մօտեցնելով. — Բայց տսիկա Սէն Ժիւլիէնի գինի է:

Տասը վայրկեան վերջը սենտիքը կը հրամայէր իր քարտուղարին:

— Պարապ շիշ մը արձանագրէ:

Երկու բժիշկներ գերեզմանատան մը առջեւէն կանցնէին. իրենցմէ մէկը գերեզմանատան դուռը ցուցնելով արհեստակցին՝ կամացուկ մը ըսաւ անոր:

— Ահա տսիկ մեր համբալ բժիշկներուն արդեանց ցուցահանդէսը:

Հարսնիքին հետեւեալ օրը, փեսան՝ հարսին:

— Երեք ամիս նշանուած մնացինք. աղէկ ըրիր որ հետո օյիմի չելար. չէ նէ չպիտի առնէիք զի:

— Սնանկ ըլլալիքը գիտէի պատասխանեց հարսնուկը:

— Ինչէ՞ն գիտէիր նայինք:

— Էհ, անգամ մը գլխուս եկաւ տէ անկէց գիտեմ. ամա ան ամէն անգամ չըլլար:

Վ Ի Պ Ա Թ Ե Ր Թ

Հրատարակուեցաւ առաջին թիւը հետեւեալ բովանդակութեամբ:

1. Երթում Օհր. Պոլսական կեանքի գրուածներ. գրած է. Պ. Ե. Սրմաքէշխանլեան. 2. Տըրաւներ եւ Դաղսնիք Հաւաստեցնութեան. հեղինակութիւն Պ. Պ. Մառիօյի և Լօնէյի: 3. Խորհրդաւոր դաս մը. հեղ. Ֆօրթիւնէ ալ և Պօպոպէի:

Տարեկան բաժնեգիրն է Եգիպտոսի համար 6 ֆր: Դիմել հետեւեալ հասցէին:

Օննիկ Բարսեղեան

Էմբոխընի Օրիենթալ, Վառնա (Պոլկարի)

ԶՄԻՌՈՒՆԻԱԿԱՆ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՊԸՏԸՏԻՍ ԵԱՆ

Թրիպոնալի ետին՝ հօթէլ սէն Ժօրժի կից:

Սմեկն սեսակ լաւ նպարեղեններէ զատ. Ձմիռ. նիսայեն քերուած քնիւր օղի, գինի, ձէք, կարագ, սնանկ, տոբիերոյ գոնետրակներ, պատրաստ անուշեղեն եւ ոշտրակներ՝ նարինջ, բալ, բարձր ընկոյզ եւ յում (գրգռիչ). նաեւ Սլաշէհիւրի հանգային ջուրը որ դժուարամարտութիւնը կը դարմանէ:

Սոյն վաճառատները կը խոստանայ իրեն դիւնոյ յաճախորդները գոհացնել անխաղախ ապրանքներովը եւ գիներս յախաւորութեամբը:

Մեր այս ըսածը հաստատու համար այցելութիւն մը բաւական է:

Մեծաքանակ ու փոքրաքանակ յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին:

7

ՏՕՐԻՕՐ ՓԱՇՏԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդական Բժիշկ Պարսից քաղաքապետանց Իշխանին

Այս անգամ Աղեքսանդրիա հաստատուած լիւնելոյ, պատիւ ունի յայտնելու յարգելի Հայ հասարակութեան, որ անկէ օր առաջներ ժամը 9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կընդունի իր սան մէջ, Այլ ժամին փողոց թիւ 31, Մզկիթին դէմը, երկրորդ յարկ:

Ներքին եւ փոքրածախան հիւանդութիւններու հետ, կը դարմանէ նաեւ երախաներու հիւանդութիւնները, 15 արոյ մասնագիտական փորձառութեամբ:

Յաջող կերպով կը դարմանէ նաեւ Աւիզուանդութիւնը եւ Մորժիկաւորութիւնը, որոնց դէմ հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ Պարսկաստանի մէջ հազարաւորներ անվնաս քողած են այդ մոլորութիւնը:

10

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Նոր Բաղդադի պատկերազարդ, Ֆրանսահայ Երկու հասո՝ 1874 մեծադիր երեսներով:

Աղբ. — Մատենագիրն փափաքելով որ իր երկասիրութիւնն ժառանգելի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, ժառանգոր որ իւր նպատակն է ամենեւին չշահիլ, այլ վնասով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հատորները ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն:

Դիմել հեղինակին հետեւեալ հասցէով:

M. G. DE LUSIGNAN

103, Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնք կանխիկ վճարմամբ: